Հաստատում եմ՝ ՄԻԽՆ, 31.08.2023թ.

Դպրոցի տնօրեն՝ Վ.Մելքոնյան

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Քաղսիի միջնակարգ դպրոց

IIIա դասարան

Դասղեկ՝ Մարիամ Գեղամյան

2023-2024 ուսումնական տարի

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

- ***Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներ***

Դասարանում բարձրացնել կարգապահությունը, աշակերտների մոտ ձևավորել կամային հատկանիշներ, ինքնուրույն մտածելու և ստեղծագործելու կարողություններ: Կազմակերպել տարբեր միջոցառումներ, արշավներ և էքսկուրսիաներ: Աշակերտների մեջ դաստիարակել ընկերասիրություն, ազնվություն, հարգալից վերաբերմունք մեծերի նկատմամբ, պարտաճանաչություն և աշխատասիրություն:

- ***Հոգևոր դաստիարակություն***

Կարևորել բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, սովորեցնել լինել ազնիվ, գթասիրտ և բարեկիրթ: Նպաստել, որ աշակերտները գիտակցեն մեր ազգային արժեքները և լինեն դրանց կրողը:

- ***Գեղագիտական դաստիարակություն***

Զարգացնել աշակերտների գեղագիտական ճաշակը, գեղեցիկը զգալու, գնահատելու և ստեղծագործելու կարողությունները: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, արվեստի օջախներ, պատմամշակութային հուշարձաններ և բնության տեսարժան վայրեր:

- ***Ռազմահայրենասիրական դաստիարակություն***

Զարգացնել հայրենասիրական վեհ զգացում, ազգային արժեքների նկատմամբ հոգատարություն, տալ տեղեկություններ հայ ժողովրդի ծագման, նրա անցած պատմության ու հերոսների մասին:

- *Ֆիզիկական դաստիարակություն*

Մասնակցել համադպրոցական սպորտային միջոցառումներին, կազմակերպել ֆիզիկական զարգացմանն ու առողջության ամրապնդմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային քայլարշավներ ու էքսկուրսիաներ։

- *Աշխատանքային դաստիարակություն*

Ձևավորել աշխատանքային կուլտուրա, հասնել այն բանին, որ նրանց աշխատասիրությունը վերածվի ամենօրյա սովորույթի և դառնա բնավորության գիծ։

- *Բնապահպանական դաստիարակություն*

Տալ գիտելիքներ բնության, նրանից օգտվելու և այն պահպանելու վերաբերյալ։ Սերմանել սեր և հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ։ Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության հատուկ պահպանվող տարածքներ։

- *Դպրոց-ընտանիք կապը*

Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, ըստ անհրաժեշտության անցկացնել անհատական ու խմբային խորհրդատվություններ, խրախուսել դպրոցի և դասարանի կյանքում ակտիվ մասնացկություն ցուցաբերող ծնողներին։

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Նշումներ կատարման մասին
1	Գիտելիքի օր։ Դասարանի կահավորում։ Ընտրել դասարանական ակտիվ, սահմանել հերթապահություն։	սեպտեմբեր	
2	Դասարանական անկյան ստեղծում։ Զրույց՝ «Օգնենք միմյանց » թեմայով։	սեպտեմբեր	
3	Զրույց եկեղեցու և եկեղեցական տոների մասին։ Խաչվերաց տոնի իմաստի մեկնաբանում։	սեպտեմբեր	
4	Զրույց՝ «Անկախության օրը» թեմայով։	սեպտեմբեր	
5	Ձևավորել հանդուրժող վերաբերմունք դիմացինի նկատմամբ։ Զրույց՝ «Իմ մտերիմ ընկերը » թեմայով։	հոկտեմբեր	
6	Աշակերտի իրավունքներն ու պարտականությունները դպրոցում։ Զրույց՝ «Ես արդեն 3-րդ դասարանցի եմ» թեմայով։	հոկտեմբեր	
7	Առած-ասացվածքների մրցույթի կազմակերպում։Զրույց՝«Գիտելիքը ուժ է» թեմայով։	հոկտեմբեր	
8	«Ոսկե աշուն» թեմայով զրույց և բնության դիտում։ Ստեղծել աշնանային անկյուն։	նոյեմբեր	
9	Դպրոցական դասագրքերի և գրենական պիտույքների վիճակի ստուգում։	նոյեմբեր	
10	Ուսումնական ստենդների և պաստառների ձևավորում։	նոյեմբեր	
11	Դասալսումներ՝ առաջադիմությունը բարձրացնելու նպատակով։	նոյեմբեր	
12	Դասասենյակը ձևավորել տոնական՝ Ամանորին ընդառաջ։	դեկտեմբեր	
13	Նամակ Ձմեռ պապիկին՝ բացիկների պատրաստում։	դեկտեմբեր	

14	Ամանորյա միջոցառման կազմակերպում և անցկացում։	դեկտեմբեր	
15	Ծնողական ժողովի կազմակերպում և կիսամյակի արդյունքների ամփոփում։	դեկտեմբեր	
16	Զրույց Հայկ Նահապետի, Հայաստանի և Հայոց բանակի մասին։	հունվար	
17	Հայրենասիրական երգերի ունկնդրում և ուսուցում։	հունվար	
18	Խճանկար «Հայրենիք» թեմայի նկարներով։	հունվար	
19	Տյառնընդառաջի տոնի խորհուրդը։	փետրվար	
20	Հեքիաթների ընթերցում, քննարկում և բեմականացում։ Թումանյանական շաբաթի նախապատրաստական աշխատանքներ։	փետրվար	
21	Մայրենիի օրվան և գրքի տոնին նվիրված միջոցառման կազմակերպում։	փետրվար	
22	Ընթերցանության մրցույթի կազմակերպում։ Զրույց՝ «Գիրքը մեր լավագույն ընկերն է» թեմայով ։	փետրվար	
23	Զրույց գարնան և բնության զարթոնքի վերաբերյալ։ Կանանց տոնին նվիրված բացիկների պատրաստում։	մարտ	
24	Մայրության և գեղեցկության տոնին նվիրված բանաստեղծությունների ընթերցում։	մարտ	
25	«Բարությունն իմ մեջ է» թեմայով զրույց-քննարկում։	մարտ	
26	Շաբաթօրյակ դասասենյակում և դպրոցամերձ տարածքում։	մարտ	
27	Ներկայացնել Սուրբ Զատիկի խորհուրդը։ Դասարանում նշել Սուրբ Զատիկը։	ապրիլ	
28	Այցելություն գյուղի եկեղեցիներ և սրբավայրեր ։	ապրիլ	

	Զրույց՝ «Իմ գյուղը» թեմայով։		
29	Զրույց՝ «Գարունը նման է մայրիկիս» թեմայով։	ապրիլ	
30	«Աշխատանքը և աշխատասիրությունը» թեմայով զրույց։	ապրիլ	
31	Ծնողական ժողովի կազմակերպում։ Առաջադիմության արդյունքների ստուգում և քննարկում։	մայիս	
32	Զրույց՝ «Պետական խորհրդանիշներ» թեմայով։	մայիս	
33	Դասագրքերի հանձնման նախապատրաստում և ստուգում։	մայիս	
34	Էքսկուրսիայի կազմակերպում և անցկացում։	մայիս	